ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Գործ հմ. ԵԴ2/4550/02/24

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը մերժելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին

18.06.2024թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արշակ

Պետրոսյանի, ծանոթանալով «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊԸ-ի միջև 23.07.21թ. կնքված թիվ «ՓՆՄԱԾՁԲ-21-10/10-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 22.05.24թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին և կից փաստաթղթերին, ինչպես նաև հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը՝ գործը դատական նիստում քննելու մասին,

ՊԱՐԶԵՑ

Հայցվոր «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊԸ-ի միջև 23.07.21թ. կնքված թիվ «ՓՆՄԱԾՁԲ-21-10/10-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 22.05.24թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը էլեկտրոնային համակարգի միջոցով Դատավոր Ա. Պետրոսյանին է մակագրվել 12.06.2024թ., որը հասանելի է դարձել 13.06.2024թ.:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122 հոդվածների պահանջներին համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան, ուստի Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:
Քննարկելով գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը՝ Դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ:
Նշված իրավանորմի տրամաբանությամբ՝ եթե դատարանն իր նախաձեռնությամբ չի եկել եզրահանգման առ այն, որ անհրաժեշտ է գործը

քննել դատական նիստում, ապա նման եզրահանգման կարող է գալ նաև գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա: Այլ կերպ՝ անկախ միջնորդության առկայությունից կամ բացակայությունից, դատարանը պետք է հանգի հետևության առ այն, որ առկա է գործը դատական նիստում, կամ որ նույնն է՝ բանավոր ընթացակարգով, քննելու անհրաժեշտություն:
Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է միջնորդություն՝ գործը դատական նիստում քննելու մասին, սակայն միջնորդությունը չի պարունակում որևէ հիմնավորում՝ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտության վերաբերյալ: Նշված է միայն, որ Հայցվորը իր խախտված իրավունքները սույն քաղաքացիական գործի շրջանակներում ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստի միջոցով, որպիսի պարագայում ներկայացված միջնորդությամբ Դատարանը չի կարող գալ եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում, ուստի միջնորդությունն ենթակա է մերժման:
Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտություն հայցադիմումը վարույթ ընդունելու օրվա դրությամբ առկա չէ:
Դատարանը փաստում է, որ գործին մասնակցող անձինք գրկված չեն դատավարական ժամկետների պահպանմամբ և համապատասխան հիմնավորումներով՝ գործը դատական նիստում քննելու մասին այլ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:
Այսպիսով, հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:
Վերոգրյալը հիմք ընդունելով և արձանագրելով, որ սույն գործը քննվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված կանոններով, և սույն դեպքում առկա չեն գործը դատական նիստում քննելու մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/4550/02/24 քաղաքացիական գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով: Միաժամանակ, նկատի ունենալով, որ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում, ուստի Դատարանը գտնում է, որ պետք է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 31.07.2024 թվականին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍԾԻՆ» ՍՊԸ-ի միջև 23.07.21թ. կնքված թիվ «ՓՆՄԱԾՁԲ-21-10/10-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 22.05.24թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործը դատական նիստում քննելու մասին, մերժել:
3. Թիվ ԵԴ2/4550/02/24 քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. հուլիսի 31-ին:
4. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**ԴԱՏԱՎՈՐ՝** Digitally signed by PETROSYAN ARSHAK 1303730265 **Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*